Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավատերություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը առևտրային հաճար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

94 97 =

...ԻԹՅՈՒՆ ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊԻ ԿՈԼԵԿՏԻՎԱՅԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՈՐԵՆ ՄՇԱԿԵԼՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

334.6:63

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հողը համայնորեն մշակելու ....

.... ընկերության։

I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. *Աշխատավորական հողօգտագործման և գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ գործող օրենքների հիման վրա սույն կանոնադրությամբ հիմնված է Հողը համայնորեն մշակելու այս ընկերությունը .... անունով։*

Ընկերությունը գործում է ՀՍԽՀ .... գավառի

.... գավառակի .... գյուղում։

Ընկերությունը գտնվում է .... գյուղում։

2. *Ընկերությունը նպատակ ունի բարձրացնել իր անդամների տնտեսությունների արտադրողականությունն ու արդյունավետությունը, կազմակերպելով իր անդամների միացյալ ուժերով դաշտային աշխատանքներ, օգտագործելով միայն գյուղատնտեսական մեքենաներ և այլ գործիքներ ու ձեռք առնելով նրանց տնտեսության բարելավման նպատակով այլ միջոցներ։*

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՄԱՐ
1897 - Ա92
ԳՐԱԴԱՐԱՆ

3. Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար, Ընկերությունն իրավունք ունի՝

ա) միջոցներ ձեռք առնել հողաշինարարության յենթարկելու իր անդամների հողաբաժինները, այդպիսիք կենտրոնացնելով մեկ տեղում, կամ վերածելով խոշոր հողաբաժինների (սառնաների):

բ) կազմակերպել ընդհանուր պլանով Ընկերության հողամասերում և անդամների առանձին հողերում կանոնավոր ցանքաշրջանառություն, կատարել միասին գյուղատնտեսական աշխատանքները, ոգտագործել միասին գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ ու այլ ինվենտար:

գ) մատակարարել իր անդամներին գյուղատնտեսական արտադրության անհրաժեշտ միջոցներ—սերմեր, ինվենտար, պարարտանյութ և այլն:

դ) կազմակերպել Ընկերության և նրա անդամների գյուղատնտեսական արտադրության մթերքների վաճառահանումը.

յե) ձեռք բերել, կազմակերպել, վարձով վերցնել և ոգտագործել գյուղատնտեսական մթերքների ու հում նյութերի մշակման և վերամշակման ձեռնարկություններ, գյուղատնտեսության մեջ ու տանը գործածվող էլեկտրոֆիկացիոն և այլ տեխնիկական կառուցումներ.

զ) միջոցներ ձեռք առնել մելիորատիվ (ճահիճների չորացում, անջրդի հողերի վոռոգում և այլն) աշխատանքներ կիրառելու Ընկերության ընդհանուր հողերում և նրա անդամների հողամասերում.

ե) կազմակերպել փոխոգնության դրամարկղ Ընկերության անդամների մահվան, հիվանդության

գույքի հրդեհման և այլ աղետների դեպքում նրանց ոգնություն ցույց տալու համար.

ը) Լուսժողկոմատի և Հողժողկոմատի տեղական մարմինների ընդհանուր վերահսկողությամբ տարածել գյուղատնտեսական գիտելիքներ, ինչպես Ընկերության անդամների, այնպես և շրջապատող բնակչության շրջանում.

թ) ձեռք առնել այլ միջոցներ Ընկերության անդամների տնտեսության բարելավման և նրա արտադրողականությունն ու արդյունավետությունը բարձրացնելու համար:

4. Ընկերությունը ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով և վերոհիշյալ խնդիրների սահմաններում կարող է ձեռք բերել ու ոտարել ամեն տեսակի գույք և ապրանքներ: Կնքել պայմանագրեր և պարտավորություններ, վորոնց թվում մուրհակային, կառուցել շենքեր ինչպես աշխատավորական հողոգտագործողների համար սահմանված հիմունքներով, նույնպես և կառուցման իրավունքով, հայց հարուցել և հանդիսանալ պատասխանող կողմ դատարաններում: Ընդհանուր ժողովի վորոշմամբ Ընկերությունը կարող է անդամագրվել գյուղատնտեսական կոոպերատիվ միություններին և իր նպատակներին համապատասխանող հասարակական կազմակերպություններին:

5. Ընկերության պարտավորություններն ապահովվում են նրան պատկանող բոլոր գույքով, ինչպես և անդամների լրացուցիչ պատասխանատվությամբ, համաձայն սույն կանոնադրության 12-րդ հոդվածի:

6. Ընկերությունն ունի իր անվանական կնիքը:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Ընկերության անդամ կարող են լինել ինչպես ընտանիքի մեծը (տանտերը), նույնպես և ընտանիքի այլ անդամները, յեթե նրանք բնակվում են Ընկերության գործունեության շրջանում և զբաղվում են աշխատավորական գյուղատնտեսությամբ կամ դրա հետ կապված աշխատավորական զբաղմունքներով:

Ընդհանուր ժողովի վորոշմամբ Ընկերության անդամ կարող են ընդունվել քաղաքացիներ սկսած 16 տարեկան հասակից, առանց Ընկերության Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի կազմի մեջ ընտրվելու իրավունքի: Բոլոր մյուս գործերում այդ անդամներն ունենում են Ընկերության մյուս անդամների բոլոր իրավունքներով:

Ծանոթ.— Ընկերության անդամ չեն կարող լինել առևտրական ձեռնարկություն ունեցող անձերը, ինչպես և հողը համայնորեն մշակելու այլ ընկերությունների անդամները:

8. Ընկերության անդամների ընդունելությունը, ինչպես և նրանց վտարման հարցը, լուծում է ընդհանուր ժողովը, ղեկավարվելով սույն կանոնադրության 12-րդ հոդվածով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Ընկերության մեջ ընդունվել ցանկացողները պետք է դրա մասին գրավոր դիմում տան Ընկերության Խորհրդին, ընդունվելու դեպքում դիմում ավոդները

պարտավոր են մուծել մուտքի վճար . . . ռ. . . . կ. և փայ . . . ռուբ. . . . կոպ.

Ծանոթ.— 1. Փայերը սահմանվում են այն չափով, վորն անհրաժեշտ է համայնացած տնտեսությունը կառավարելու համար:

Ծանոթ.— 2. Ընկերության Խորհրդի վորոշմամբ փայը կարող է մուծվել վոչ միայն դրամով, այլ նաև գույքով, մեքենաներով, գործիքներով, սերմերով, անասուններով և այլն:

Ընկերության անդամ սակավազոր տնտեսությունների փայերի մուծումը թեթևացնելու նպատակով, Ընկերության ընդհանուր ժողովի վորոշմամբ սահմանվում և մաս-մաս մուծման կարգ:

10. Ընկերության անդամները նրա Խորհրդի համաձայնությամբ, բացի սահմանված փայից կարող են մուծել վորոշ գույք, վորպես ժամկետավոր կամ անժամկետ ավանդ վորոշ տոկոսով, սակայն այդ տոկոսը, վորը վճարվելու է Ընկերության եկամուտներից, չպետք է բարձր լինի այն տոկոսից, վորը վճարում է տեղային վարկային ընկերությունն իր ավանդների համար:

Ավանդները վերադարձնում են տերերին տոկոսներով միասին այսպես. անժամկետ ավանդներն բոլոր պահանջման տերերի, սակայն Ընկերության ներքին կարգ ու կանոնով սահմանված ժամկետներին, և տնտեսների Ընկերությունից դուրս գալու կամ վտարվելու դեպքում. ժամկետավոր ավանդները վերադարձնում են վորոշված ժամկետներին:

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

11· Ընկերության մեջ ընդունվող նոր անդամները պատասխանատու են նաև Ընկերության այն պարտավորությունների համար, որոնք հանձն է առել Ընկերությունը մինչև նրանց ընդունվելը:

12· Ընկերության յուրաքանչյուր անդամ Ընկերության պարտավորությունների համար կրում է լրացուցիչ պատասխանատվություն վերջինիս մնանկության, ինչպես և այն դեպքում, որ ցույց է տրված այս կանոնադրության 36-րդ հոդվածում:

Սակայն այդ պատասխանատվությունը չի կարող դերազանցել Ընկերության յուրաքանչյուր անդամի փայի.....պատիկ գումարից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ·

13· Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է իր անձնական աշխատանքով մասնակցել Ընկերության ընդհանուր աշխատանքներին, յենթարկվելով Ընկերության կանոնադրությանը, հաճախել Ընդհանուր Ժողովները, յենթարկվել Ընդհանուր Ժողովի և Խորհրդի վորոշումներին:

14· Ընկերության յուրաքանչյուր անդամ կարող է ընտրվել Ընկերության ղեկավարող որգաններում: Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի մասնակցելու Ընդհանուր Ժողովներին մեկ ձայնի իրավունքով· Ընկերության անդամն իր ձայնն ուրիշին տալու իրավունք չունի:

15· Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի Ընկերության գործերի վերաբերյալ տալ Խորհրդին գրավոր հայտարարություններ և պահանջել, որ քննության առնեն այդ հայտարարությունները:

16· Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր տնտեսության կանոնավորման համար ընկերությունից ստանալ աջակցություն և ոգնություն, Ընդհանուր Ժողովի սահմանած կանոնների համաձայն:

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՁԵՎ ՎՏԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ·

17· Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հեռանալ Ընկերությունից, տալով այդ մասին գրավոր հայտարարություն: Հեռացող անդամի հետ Ընկերությունը գույքային հաշիվը վերջացնում է մեկ ամսվա ընթացքում այն գործառնական տարվա հաշվեմատյանները փակելուց հետո, որ տարին նա հեռացել է· իսկ տնտեսական ընդհանուր կապը հեռացող անդամի հետ դադարեցնելու կարգը (նրա բաժին հողամասի համայնական մշակումից զատելը, աշխատանքների դադարեցնելը, բերքի բաշխումն և այլն) վորոշվում է ընդհանուր կանոններով, որ սահմանում է Ընդհանուր Ժողովը:

Ընկերության վախճանված անդամի գույքային իրավունքները փոխանցվում են նրա ժառանգներին:

18· Ընկերության հանդեպ իր պարտավորությունները չկատարող, կանոնադրությունը խախտող, Ընդհանուր Ժողովի վորոշումներին չենթարկվող և սահմանափակ ի վնաս Ընկերության գործող անդամը կա-

յուղ և վճարվել Ընկերությունից Ընդհանուր ժողովի վորոշմամբ․ այս դեպքում պետք է առաջնորդվել սույն կանոնադրության 42-րդ հոդվածով։

19․ Ընկերությունից կամովին հեռացած կամ վտարված անդամն իրավունք ունի հետ ստանալ իր փայը և ընկերությանն օգտագործելու համար հանձնած իր ամբողջ գույքը 17-րդ հոդվածում սահմանված կարգով և ժամանակին։ Փայից պահվում է այն մասը, վորով Ընկերությունը ծածկում է ընդհանուր վնասից այդ անդամին հասնող վնասը։ Ընկերությունից հեռացած կամ վտարված անդամները կամ նրանց ժառանգները (իրավահաջորդները) Ընկերությունից հեռանալուց հետո մի տարի ժամանակով պատասխանատու յեն Ընկերության այն պարտավորությունների համար, վոր ստանձնել է Ընկերությունը մինչև նրանց հեռանալը։

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20․ Ընկերության միջոցները կազմվում են սույն կանոնադրության 9-րդ հոդվածի համաձայն գանձվող փայերից, տնտեսական գործառնությունների յեկամուտներից, փոխառություններից և այլ աղբյուրներից։

21․ Ընկերության միջոցները բաժանվում են հետևյալ դրամագլուխների՝

ՀԻՄՆԱԿԱՆ, ՊԱՀԵՍՏԻ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ

22․ Հիմնական դրամագլուխը կազմվում է Ընկերության անդամների փայերից, Ընդհանուր ժողովի

վորոշմամբ շահույթի հատկացումներից, զանազան կազմակերպությունների և հիմնարկների յերկարատև փոխառություններից, վորոնք տրվում են հատկապես հիմնական դրամագլուխը ուժեղացնելու համար, և Ընկերության այլ հասույթներից։

23․ Ընկերության համայնացված միջոցներն ուժեղացնելու և Ընկերության դրամագլուխները կայուն դարձնելու նպատակով ստեղծվում է հատուկ անբաժանելի դրամագլուխ, վորը կազմվում է Ընկերության տարեկան շահույթի... .... %-ային հատկացումներից, իսկ վերջինից .....տոկ. հատկացվում է հանրապետական, գավառային կամ գավառակային կոլեկտիվ հողագործության զարգացման ֆոնդին։ Անբաժանելի դրամագլուխը գործադրվում է հիմնական և շրջանառու դրամագլուխների գծով Ընկերության տնտեսական կարիքների համար։ Ընկերության լուծարքի դեպքում անբաժանելի դրամագլուխը չի բաժանվում անդամների միջև, այլ հատկացվում է կոլեկտիվ հողագործման ֆոնդին։

> Ծանոթ․— Անժամկետ և անտոկոս փոխառության ձևով ստացած պետական գույքը (գյուղատնտեսական շենքեր և անշունչ ինվենտար, մեքենատրակ-կայաններ, արդյունաբերական և ոռոգման ձեռնարկությունները և այլն) հաշվվում է անբաժանելի դրամագլխի մեջ, համաձայն նրա ընդունված ժամանակ կատարված գնահատության։
>
> Ընկերության լուծարքի դեպքում ստացած պետական գույքը վերադարձվում է Պետությանը, իսկ արդյունաբերական ձեռնարկությունները

հանձնվում են դավառային կամ նրա համապատասխանող գործադիր կոմիտեին:

24. Ընկերության վնասները ծածկելու համար կազմվում է պահեստի դրամագլուխ, որին հատկացվում է Ընկերության զուտ շահույթի վոչ պակաս քան 200 %-ը:

Յերբ պահեստի դրամագլուխը հավասարվում է վայելի գումարին, Ընկերության Ընդհանուր Ժողովի վորոշմամբ այդ դրամագլխին կարող են այլևս շահույթից տոկոսային հատկացումներ չարվել: Ընդհանուր Ժողովը ոտհմանում է պահեստի դրամագլխի պահպանման ձևը, վորով պետք է ապահովվի նրա անվտանգ լինելը և անարգել իրացումն որենքով սահմանված կանոնների համաձայն:

25. Հատուկ դրամագլուխները կազմվում են Ընդհանուր Ժողովի վորոշմամբ Ընկերության շահույթից տրվող հատկացումներից, ինչպես և այն մուծումներից, որ ստանում է Ընդհանուր Ժողովը, հատուկ գործառնություններ կատարելու համար (որինակ մելիորատիվ և այլ աշխատանքներ կատարելու համար:)

Հատուկ դրամագլուխների ստեղծումն ու գործադրումը կատարվում է Ընդհանուր Ժողովի հաստատած կանոններով:

26. Իր շրջանառու միջոցներն ուժեղացնելու նպատակով Ընկերությունը կարող է կնքել փոխառություններ պետական, կոոպերատիվ կազմակերպությունների և այլ հաստատությունների ու անձերի հետ, ինչպես և ընդունել իր անդամներից ավանդներ, ըստ վորում իբրև ավանդ կարող են տրվել գյուղատնտեսական ինվենտար, սերմեր և այլ տեսակի գույքեր ժամանակավորապես ոգտագործելու համար: Փոխառությունները կնքում է Ընկերության Խորհուրդը. փոխառության գումարն ու պայմանները վորոշում է Ընդհանուր Ժողովը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

27 Բոլոր անդամների համար վորպես ընդհանուր ձեռնարկումներ Ընկերությունը մշակում և կիրառում է՝

ա) ընդհանուր ցանքաշրջանառություն ինչպես Ընկերության հողամասում, այնպես ել իր անդամների հողերում:

բ) այդ հողերում մելիորատիվ աշխատանքներ և ընթացիկ պարարտացում:

գ) հարոնների վաղ հերկումը և հողի պատրաստելը ցանքի համար.

դ) ցանքերի կատարում ընտիր սերմերով.

յե) հնձի, կալսելու և այլ աշխատանքների միասնական կատարում.

զ) . . . . . .

է) . . . . . .

ը) . . . . . .

Վերոհիշյալ ձեռնարկումներից յուրաքանչյուրի առթիվ Ընդհանուր Ժողովը Խորհրդի զեկուցման հիման վրա հաստատում է յուրաքանչյուր գյուղատնտ-

տեսական կամպանիայի ծրագիրը և աշխատանքների կատարման կանոնները։

28. Ընկերության տնտեսական ձեռնարկումների ինչպես և նրա անդամների տնտեսությունների վերաբերյալ գյուղատնտեսական և ոժանդակ աշխատանքները կատարվում են Ընկերության բոլոր անդամների անձնական աշխատանքներով ըստ սահմանված կանոնների (27-րդ հոդ.) և Խորհրդի պահանջի։

29. Ընդհանուր ժողովի սահմանած կարգով ու կանոններով Խորհուրդը կարող է Ընկերության առանձին անդամներին աշխատանքի կանչել տնտեսական ոգնություն ցույց տալու Ընկերության կարիքավոր անդամներին։

30. Ընկերության վոչ մի անդամ առանց հարգելի պատճառների իրավունք չունի հրաժարվել Խորհրդի հրավերով աշխատանքի գնալուց և աշխատանքներ կատարելուց։

31. Կողմնակի մարդկանց Ընկերության աշխատանքներին մասնակից դարձնելը թույլատրվում է բացառիկ դեպքերում, յերբ Ընկերության անդամների բանվորական ուժը չի բավարարում անհետաձգելի տնտեսական աշխատանքները կատարելու համար. (Օրինակ՝ հնձի, կալսելու, արտադրանքի վերամշակման համար և այլն, կամ յերբ Ընկերությունը չունի իր մասնագետները—գյուղատնտես, հաշվետար և այլ մասնագիտական պատրաստություն ունեցող անձեր)։

32. Գյուղատնտեսական և ոժանդակ աշխատանքները կատարում են Ընկերության կամ նրա անդամների, կամ թե մեկի և թե մյուսի ինվենտարով միասին, բաց վորում Ընկերության յուրաքանչյուր անդամի ազատ ինվենտարը կարող է ոգտագործվել ինչպես Ընկերության ընդհանուր տնտեսական աշխատանքներում, այնպես էլ յուրաքանչյուր անդամի տնտեսության մեջ, յեթե նրանք այդ ինվենտարի կարիք են զգում, վորը կատարվում է Խորհրդի կարգադրությամբ և Ընդհանուր ժողովի այդ մասին սահմանած կանոններով ու պայմաններով։

33. 29 և 32-րդ հոդվածների համաձայն՝ Ընկերության առանձին անդամներին անձնական աշխատանքներով կամ սեփական ինվենտարով մյուս անդամների կողմից ցույց տրված ոգնությունը վարձատրվում է Ընդհանուր ժողովի սահմանված կանոններով։ Ընդհանուր ժողովը սահմանում է նաև այն կարգը, վորով պետք է ոգտագործվի Ընկերության միջոցներով ձեռք բերած ինվենտարը։

34. Ընկերության հողերից ստացված բերքը և նրա այլ յեկամուտները բաժանվում են Ընկերության անդամների միջև Ընդհանուր ժողովի կողմից սահմանած կարգով ու հիմունքներով։ Այդ բաշխումը կատարելիս կարող են նկատի առնվել առանձին անդամների կողմից տվյալ ժամանակաշրջանում Ընկերության համար կատարած տնտեսական ու ոժանդակ աշխատանքների չափը, նրա հողի տարածությունը ընդհանուր հողային ֆոնդի մեջ, նրա ինվենտարը, վոր ոգտագործվել է Ընկերության տնտեսության մեջ, նրա կողմից Ընկերության տված ժամանակավոր ավանդների (ինվենտարի, սերմի և այլ գույքի) արժեքը և այլն։

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹՆ ՈՒ ՎՆԱՍԸ

35. Ընկերության շրջանառությունից ստացած շահույթները բաշխվում են Ընդհանուր ժողովի վորոշմամբ լրացնելու հիմնական դրամագլուխը, դրա մեջ և անբաժանելի դրամագլուխը, պահեստի ու այլ դրամագլուխները և այլ նպատակի:

36. Ընկերության շրջանառությունից ստացած վնասը ծածկվում է պահեստի դրամագլխից, իսկ նրա չբավարարելու դեպքում այլ դրամագլուխներից: Ընդհանուր ժողովը կարող է առանց վերջին դրամագլուխներին ձեռք տալու, վնասների պակասորդ գումարը հավաքել Ընկերության բոլոր անդամներից, յուրաքանչյուրի պատասխանատվության սահմաններում, (հոդ. 12) և նշանակել յուրաքանչյուր բաժինը վճարելու ժամկետը: Նրանց չվճարելու դեպքում Ընկերության Խորհուրդը կարող է վճարումը կատարել ի հաշիվ նրանց փայի, իսկ պակասորդը բռնագանձել նրանցից: Վնասների այսպիսի մասնատրումը չի վերացնում և վոչ էլ պակասեցնում Ընկերության անդամների լրացուցիչ պատասխանատվությունը, Ընկերության լուծարքի դեպքում, այն պարտավորությունների համար, վոր ստանձնել է Ընկերությունը:

ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

37. Ընկերության հաշվետու տարին հաշվում է . . . . . ամենից . . . -ը: Ընկերությունը պարտավոր է ունենալ իր հաշվապահությունը: Վոչ ուշ քան հաշվետու տարին անցնելուց յերեք ամիս հետո, Խորհուրդը պարտավոր է կազմել իր տարեկան դրավոր հաշվետվությունը: Հաշվետվությունը ստուգում և վերատուգիչ Հանձնաժողովը և հաստատում է Ընդհանուր ժողովը:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

38 Ընկերության գործերը վարում են Ընկերության անդամների ընդհանուր ժողովը և Ընկերության խորհուրդը:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

39. Ընդհանուր ժողովը հանդիսանում է ընկերության բարձրագույն մարմինը, նրան և պատկանում ընկերության գործերի ընդհանուր ղեկավարությունը:

40 Ընդհանուր ժողովը հաստատում է ընկերության սնանուական ձեռնարկումների ծրագիրը, տալիս և ղեկավարող ցուցմունքները բոլոր գործերի վերաբերմամբ ընկերության խորհրդին, լսում և հաստատում է խորհրդի և վերատուգիչ հանձնաժողովի զեկուցումները, լուծում է խորհրդի, վերատուգիչ հանձնաժողովի և ընկերության առանձին անդամների մատրած հարցերը, ընտրում է խորհրդի և վերատուգիչ հանձնաժողովի անդամներին և լուծում է տալիս ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերին:

41. Ընդհանուր ժողովները լինում են հերթական և արտակարգ: Ընդհանուր ժողովները գումարվում են վոչ պակաս քան տարին . . . . . անգամ:

Արտակարգ ընդհանուր ժողովները գումարվում են խորհրդի կողմից, ինչպես նրա նախաձեռնությամբ,

այնպես եւ վերստուգիչ հանձնաժողովի, կամ ընկերության անդամների մեկ հինգերորդ մասի պահանջով:

42. Ընդհանուր ժողովը համարվում է օրինական, երբ ներկա են անդամների ընդհանուր թվի վոչ պակաս քան կեսը: Ընդհանուր ժողովի վորոշումները ընդունվում են ձայների հասարակ մեծամասնությամբ եւ բաց քվեարկությամբ: Ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր են ընկերության բոլոր անդամների համար:

Ծանոթ.— Կանոնադրության փոփոխման, բերքի եւ ընկերության յնկամուտների բաշխման կարգը սահմանելու, անդամներ ընդունելու կամ վտարելու, խորհրդի եւ վերստուգիչ հանձնաժողովի անդամներին հետ կանչելու, ինչպես եւ ընկերությունը լուծարքի յենթարկելու հարցերում պահանջվում է անդամների $^3/_4$ ներկայություն եւ ներկա ձայների $^2/_3$ վորոշումը:

43. Յեթե հրավիրված ժողովը չկայանա՝ պահանջված թվով անդամներ չլինելու պատճառով, յերկրորդ ժողովը պետք է նշանակել վոչ շուտ քան հետեւյալ որը եւ վոչ ուշ քան յերկու շաբաթ հետո: Յերկրորդ անգամ հրավիրված ժողովը օրինական է համարվում, անկախ ներկաների թվից: Սակայն § 42-ի ծանոթության մեջ հիշատակված հարցերի վորոշումը համարվում է օրինական ցույց տված թվով անդամների ներկա լինելու եւ համապատասխան թվով ձայներ տալու դեպքում:

44. Տուրքանշյուր ընդհանուր ժողովի տեղի եւ ժամանակի, ինչպես եւ որակարգի մասին, խորհուրդը պետք է ժամանակին տեղեկացնի ընկերության անդամներին:

45. Ընդհանուր ժողովի յուրաքանչյուր նիստ պետք

է ունենա իր արձանագրությունը: Արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահն ու քարտուղարը:

Բ. ԽՈՐՀՈՒՐԴ.

46. Խորհուրդը հանդիսանում է ընկերության գործադիր մարմինը: Խորհուրդը գործում է սույն կանոնադրության եւ ընդհանուր ժողովի վորոշումների համաձայն եւ վարում է Ընկերության անունով Ընկերության բոլոր հարաբերությունները պետական հաստատությունների եւ այլ կազմակերպությունների ու մասնավոր անձանց հետ, առանց հատուկ լիազորագրի:

47. Խորհուրդն ընտրվում է ընկերության անդամներից ընդհանուր ժողովում բաց քվեարկությամբ մի տարի ժամանակով, թվով՝ յերեք անդամից եւ յերկու թեկնածուից վոչ պակաս: Թեկնածուները փոխարինում են խորհրդի անդամներին, նրանց բացակայության, կամ խորհրդի կողմից դուրս գալու դեպքում: Խորհրդի նախագահը ընտրվում է ընդհանուր ժողովում:

Ծանոթ.— Ընկերության խորհրդի եւ վերստուգիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող ընտրվել նրանք, ովքեր զբաղված են Խորհուրդներում ընտրելու ձայնի իրավունքից (ձայնատուրկները), ինչպես եւ ամուսինները (յերբ նրանցից մեկն արդեն անդամ է ընտրված այդ մարմիններից մեկի կամ մյուսի մեջ), կամ մինչև 3-րդ աստիճանի հասնող արյունակցություն ունեցողներ (ծնողներն ու իր զավակները, պապը կամ տատը ու թոռը, յեղբայր ու քույր, հոր յեղբայր և յեղբոր կամ քրոջ զավակ):

48. Գործառնությունների բաժանումը խորհրդի անդամների մեջ կատարվում է խորհրդի նիստում,

խորհրդի անդամ գանձապահը չի կարող լինել և միաժամանակ ընկերության հաշվապահը:

49· Խորհուրդը ամբողջ ընթացիկ աշխատանքները բաժանում է Ընկերության անդամների միջև և հետևում է նրանց կատարմանը: Խորհուրդը պարտավոր է միջոցներ ձեռք առնել հայթայթելու Ընկերության համար անհրաժեշտ միջոցներ, գանձել նրան հասանելիք պարտքերը, պահպանել նրա գույքը և պահել գույքի ճիշտ հաշիվը: Նա պարտավոր է պահել աշխատանքների հաշիվները, վորոնք կատարել են Ընկերության անդամները Ընկերության ընդհանուր գործում, և կատարել Ընդհանուր ժողովի կողմից նրա վրա դրված այլ պարտականությունները: Բոլոր կարևորագույն հարցերը Խորհուրդը ներկայացնում է Ընդհանուր ժողովի վորոշմանը:

50· Խորհրդի նիստերն որինական են համարվում, յեթե ներկա յե Խորհրդի անդամների վոչ պակաս քան կեսը և դրանց թվում նախագահը կամ նրա տեղակալը: Խորհուրդում հարցերը լուծվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայների հավասար բաժանվելու դեպքում հարցի լուծումը թողնում են հետևյալ նիստին, կամ հանձնվում է ընդհանուր ժողովին: Խորհրդի վորոշումները արձանագրվում են արձանագրությունների մատյաններում և ստորագրվում բոլոր ներկա յեղող անդամների կողմից:

51· Բացի տարեկան հաշվետվությունից, խորհուրդը պարտավոր է ընդհանուր ժողովի վորոշած ժամկետներին զեկուցումներ տալ ընդհանուր ժողովին ընկերության գործերի դրության մասին:

52· Խորհրդի գործունեության վերաբերյալ բոլոր թղթերը տրվում են ընդհանուր ժողովին:

7. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

53· Ընկերության խորհրդի տնտեսական գործունեությունը ստուգելու համար, ընդհանուր ժողովում ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով՝ բաղկացած յերեք անդամից և յերկու թեկնածուից, մեկ տարի ժամանակով:

Հանձնաժողովը իրավունք ունի ստուգումները կատարել ամեն ժամանակ իր նախաձեռնությամբ, կամ ընկերության անդամների $^1/_5$-ի պահանջմամբ:

Ստուգումը կատարվում է յերեք ամիսը մեկ անդամից վոչ պակաս:

54· Վերստուգիչ հանձնաժողովը իր գործունեության մասին զեկուցում է տալիս ընդհանուր ժողովին առնվազն տարին յերկու անգամ:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

55· Ընկերությունը իր գործունեությունը դադարեցնում է՝

ա) յեթե այդպիսի վորոշում է կայացնում անդամների ընդհանուր ժողովը·

բ) յեթե ընկերության անդամների թիվը 5-ից պակաս լինի·

գ) դատարանի վորոշմամբ Ընկերությունը անանձ հայտարարելու դեպքում:

դ) զավառական գործկոմի կամ ՀՍԽՀ Կենտգործկոմի վորոշմամբ, յեթե ընկերությունը չեղվի իր կանոնադրությունից կամ գործի ի մնաս պետության չահերի:

56. Ընկերության գործունեության դադարեցման կարգը, լուծարքի ժամկետները, Լիկվիդացիոն Հանձնաժողովի գործունեության և պարտատերերի պահանջների բավարարման կարգը վորոշվում են կոոպերատիվ ձեռնարկությունների գործունեության լուծարքի, միացման և բաժանման կարգի վերաբերյալ օրենքով, վորը հաստատված է ԽՍՀ Միության Կենտգործկոմը և Ժողկոմխորհը 1927 թ. հունիսի 15-ին. (Օրենքների ժողովածու 1927 թ. № 37 հոդված 372) և գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ օրենքի 131–154 հոդվածներով, հաստատված Ռ.Խ.Ս.Հ. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1927 թ. հոկտեմբերի 3-ին:

57. Ընկերության անդամների մուծած փայերը չվերադարձվում են Ընկերության պարտքերի մարումից վոչ առաջ, համենայն դեպս վոչ շուտ, քան լուծարքի մասին արված հայտարարությունից յերեք ամիս հետո. մնացած գույքը տնօրինվում է համաձայն Ընդհանուր Ժողովի վորոշման:

9. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄ

58. Ընկերության Ընդհանուր Ժողովը կարող է փոփոխել և լրացնել սույն կանոնադրությունը, չխախտելով նրա 42-րդ հոդվածը: Կանոնադրության մեջ մտցրած բոլոր փոփոխությունների մասին Ընկերության Խորհուրդը պարտավոր է անմիջապես հաղորդել այն հաստատությանը, վորտեղ գրանցված է կանոնադրությունը, և միայն այդ փոփոխումների գրանցումներից հետո դրանք օրինական ուժ են ստանում:

ՀՐԱՀԱՆԳ

ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՈՐԵՆ ՄՇԱԿԵԼՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կանոնադրությունը ծառայում է նրա համար, վորպեսզի ընկերությունը օրինական իրավունքներ ստանա, ինչպես և նրա համար, վորպեսզի ընկերությունը իր աշխատանքների ընթացքում ղեկավարվի նրանով: Այս կանոնադրությունը հանդիսանում է վորպես օրինակելի կանոնադրություն: Կանոնադրությունն ընդունելուց առաջ, հարկավոր է լավ քննել նրա յուրաքանչյուր կետը և յեթե կարիք լինի, մտցնել փոփոխություններ ու լրացումներ, պայմանով, վոր նրանք չհակասեն հողային և այլ օրենքներին: Կանոնադրությունը գրանցվում է գավհողբաժիններում:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱԶՄԱԿԵՏԵՐՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՂԵՐԸ.

1. Կանոնադրության § 1 բազմակետերի տեղում գրվում են ընկերության անունը, նրա գործունեության շրջանը:

2. Կանոնադրության 9-րդ հոդ. բաց տեղում պետք է նշանակել մուտքի և փայերի քանակը:

3. Կանոնադրության §12-ում գրվում է. ընկերության գործերի համար սահմանված պատասխանատվության չափը:

4. § 23–ում նշանակվում է պարտադիր մուծումների սահմանված քանակը, օրինակ՝ «25 %»:

5. § 37–ում դրվում է, թե որ ժամկետն է ընկերությունը համարում իր հաշվետու տարվա սկիզբը և վերջը. օրինակ՝ «հոկտեմբերի 1–ից մինչև սեպտեմբերի 30–ը» կամ «հունվարի 1–ից մինչև դեկտեմբերի 31»–ը:

6. § 41–ում հարկավոր է նշանակել, թե տարվա մեջ քանի անդամից պակաս չպետք է դումարվին ընկերության հերթական ընդհանուր ժողովները:

Հիմնադիրների ժողովի կողմից կանոնադրության մեջ մտցրած բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է նշվեն կանոնադրության վերջում և գրված լինեն գրանցման համար ուղարկվող 3 օրինակ կանոնադրության մեջ:

ԻՆՉՊԵՍ ԳՐԱՆՑԵԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Կանոնադրությունը գավառային Հողբաժնում գրանցելու, ընկերությունը չի կարող գոյություն ունենալ, որպես իրավական անձ և չի կարող ոգտվել այն իրավունքներով ու առավելություններով, որոնցով ոգտվում են այդ ընկերությունները, համաձայն գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ օրենքի:

Կանոնադրությունը ճիշտ գրանցելու համար պահանջվում է՝ որպեսզի կանոնադրությունն ընդունած լինի հիմնադիրների ընդհանուր ժողովը, նրա տակ դիմաց ստորագրեն առնվազն 5 հիմնադիր անդամներ: Գրանցման ուղարկվում են հետևյալ փաստաթղթերը:

1. Ցերեք օրինակ կանոնադրություն, որոնք պետք է ստորագրված լինեն այն հիմնադիր անդամների կողմից, ովքեր ստորագրել են գրանցման մասին յեղած դիմումը:

2. Ընկերության անդամ ցանկացողների անվանացուցակը, որ պետք է ստորագրված լինի նրանց խոսկան ձեռքերով: Այդ ցուցակում հիշատակված անձերի մասին գավառային դործկոմը պետք է դրավոր վկայի, որ դրանք ոգտվում են ընտրական իրավունքներով:

3. Դրավոր դիմում կանոնադրության գրանցման մասին: Այդ դիմումի մեջ պետք է գրված լինի այն հասցեն, որով գրանցող հիմնարկը պետք է ուղարկի դիմումի պատասխանը: Ցեթե դիմումն ուղարկվում է լիազորի միջոցով, դիմումի մեջ պետք է հիշատակել, որ այսինչ քաղաքացուն հանձնարարվում է դիմում անել կանոնադրության գրանցման մասին:

Դիմումի մեջ նշվում է, որ անվանացուցակում հիշատակված հիմնադիրներն ամուսիններ չեն և չունեն մինչև յերրորդ (ներառյալ) աստիճան հասնող արենակցություն:

Դիմումը ստորագրող անձերի (սրանց թիվն եռ պետք է լինի 5–ից վոչ պակաս) ստորագրությունները պետք է հաստատված լինեն գյուղխորհուրդում, կամ գավառակային գործկոմում: Կանոնադրության տակ և անվանացուցակի մեջ յեղած ստորագրությունների վերացում չի պահանջվում: Կանոնադրության և մյուս փաստաթղթերի վրա դրոշմանիշ չի փակցվելու:

Կանոնավոր կազմված կանոնադրությունը չհաստատելու դեմ կարող են բողոքել մեկ ամիս ժամանակամիջոցում: Գավառային հողհանձնաժողովների վրա գանգատ տրվում է Հանրապետական Հողժողկոմատին: Գանգատը պետք է ուղարկել նույն հողմարմնի միջոցով, վորը մերժել է գրանցել կանոնադրությունը: Պետք է նկատի առնել, վոր հողային մարմինները պարտավոր են մեկ ամսվա ընթացքում կամ գրանցել կանոնադրությունը կամ հայտնել, վոր հրաժարվում են գրանցել, հիշատակելով որենքների այն հոդվածները, վորոնց հիման վրա անկարելի յե գրանցել կանոնադրությունը:

Որենքով ընկերության մեջ չեն կարող լինել հինգ հոգուց պակաս անդամներ:

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գրաճեպգլխ. 810 բ. Պատվեր 1008 Տիրաժ 1000

ՀՀ Ազգային գրադարան
NL0945521

94-1930р.
И92
1897